

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բնագրի իրավունքով

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄՈՒՐԱԴ ԼԵՎՈՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ /1918-1920թթ./

Մասնագիտությունը - Հայրենական պատմություն - 07.00.02.

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
նայցման ատենախոսություն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 1995

Աշխատանքը կատարվել է Երևանի փետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում:

Գիտական ղեկավար՝ Պատմական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր Հ. ՌԻ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

1. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՋՈՀՐԱԲՅԱՆ Է. Ա.

2. Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Երևանի պետական
մանկավարժական ինստիտուտ

Ստեղծագործության պաշտպանությունը կայանալու է՝

„31-ի“, 1995թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող Դ. 003.19.01
մասնագիտացված խորհրդի նիստում 1375019, Երևան-19, Մարշալ Բաղդասյան
24Գ, 4-ի 13-ի

Ստեղծագործության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության ինս-
տիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է „4-ի“, 1995 թ.

Մասնագիտացված խորհրդի գիտնական

քարտուղար, պատմական գիտությունների

թեկնածու

Ռ. Լ. ԱՋԻՋԲԵԿՅԱՆ

Խրեմի Կառավարություն
Հայկ. խորհրդի Լիարժեքագրության
ամենազեղված ցանկաթղթաշերտի
Մեմբեր

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ. - 1918 թ. մայիսին,
շուրջ 600 տարվա ընդմիջումից հետո, միջազգային և ներքին բարդ իրա-
դրության պայմաններում վերականգնվեց հայկական պետականությունը և
հաջակվեց Հայաստանի Հանրապետությունը: Ծանկացած ժողովրդի համար պե-
տականության կայացման և ամրապնդման կարևորագույն և առաջնահերթ պայ-
մաններից մեկը սեփական բանակի կազմավորումն է: 1915 թ. մեծ եղեռն -
նից մազապուրծ հայ ժողովուրդը, որը կենաց ու մահու պայթյուն էր մը -
դուրս իր գոյությունը մի պատահողի վրա պահպանելու համար, բնականա-
բար, առաջին հերթին իր ողջ ուժերը պետք է նպատակամղեր կանոնավոր
բանակ ստեղծելու գործին, լավ գիտակցելով, որ թուրքական յաթաղանից
փրկվելու և հայոց պետականությունը կառուցելու այլ ուղի չկա: Այս ու-
զով էին տոգորված թե՛ Հայաստանի առաջին հանրապետության պետական ղե-
կի մոտ կանգնած քաղաքական ու ռազմական գործիչները, թե՛ 1918 թ. մա-
յիսյան հերոսամարտերում մաքառած հայ սպաներն ու զինվորները և թե՛
Երևանում ու նրա շրջակայքում կուտակված արևմտահայ զաղթականությունը
ու տեղացի բնակչությունը: Նորաստեղծ հանրապետության կառավարությու-
նը բանակի կազմավորմանը և ամրապնդմանը հեռանալիս եղավ իր գործու-
նեության առաջին իսկ ժրերից: Ուստի հայոց պետականության վերականգ-
նման և ընդհանրապես Հայաստանի առաջին հանրապետության պատմության
ուսումնասիրության, ամբողջ շրջալույս առաջնահերթ է և հայկական զին-
ված ուժերի ստեղծման պատմության ուսումնասիրությունը և գիտական ըն-
սաբանումը, առանց որի մեր ժողովրդի նորագույն պատմության այս կարե-
վորագույն փուլի բացահայտումը կմնա թերի:

Հայաստանի առաջին հանրապետության բանակի կազմավորման գործը -
թացքը, քաղաքական նկատառումներից ելնելով, խորհրդային իշխանության
տարիներին գիտականորեն ընդհանրապես չի ուսումնասիրվել, երբեմն հաս-
կանալի պատճառներով խեղաթյուրված է ներկայացվել, իսկ հաճախ էլ ամ-
բողջովին անտեսվել է: Ներկայումս, երբ մեր ժողովուրդը կառուցում է
իր անկախ պետականությունը, հայ պատմաբանների առջև ծառացել է կարե-
վորագույն խնդիր՝ հերքազատվել նախկինում թույլ տրված խեղաթյուրում-
ներից, կողմնակալ գնահատականներից և տալ մեր ժողովրդի անցած պատմա-
կան ուղու ճշմարտացի ու անաչառ պատկերը՝ այդ թվում նաև հայկական
բանակի ստեղծման պատմությունը:

ՈՒՍՈՒՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԵՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐԵՆԸ. - Ելնելով վերոհիշ-
յալից մենք մեր առջև նպատակ ենք դրել բազմակողմանիորեն ուսումնա-
սիրել և առարկայորեն ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության
բանակի կազմավորման և գործունեության պատմությունը: Հետազոտության

նպատակն է նաև ցույց տալ զինված ուժերի կատարած կարևոր դերը հանրապետության պետական-քաղաքական կյանքում:

Հետազոտության մեջ աշխատել ենք հանգամանորեն անդրադառնալ հետևյալ խնդիրներին:

1. Բացահայտել Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի կազմակերպման գործընթացը:

2. Մանրամասնորեն ներկայացնել բանակի կառուցվածքը և թվականը:

3. Տալ հայկական բանակի սպառազինությանը և նրա համալրման աղբյուրները:

4. Օգտագործելով արխիվային, նյութերը ամբողջովին ի հայտ բերել բանակի սպայական կազմը:

5. Ուսումնասիրել հայկական բանակի գործունեությունը ինչպես ներքին իրադրության կայունացման, այնպես էլ Հայաստանի առաջին հանրապետության պաշտպանության գործում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԵԱԿԱՆ

ՆԵՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ.— Հայաստանի առաջին հանրապետության զինված

ուժերի ստեղծման և հայրենիքի պաշտպանության գործում նրա դերը հայ պատմագրության մեջ ամենաքիչ ուսումնասիրված հարցերից մեկն է: Հրապարակի վրա եղած աշխատությունները, որոնցում ուղղակիորեն կամ մասնակիորեն շոշափված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծման խնդիրը, հնարավորություն չեն ընձեռում ամբողջական ու առարկայական պատկերացում կազմել պետական շինարարության այդ կարևորագույն ուղորտի մասին: Թերևս արժանահիշատակ է Կ. Ա. Հարությունյանի, «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ.», թեմայով դոկտորական ղիսերտացիան: Այդ աշխատության մեջ լուսաբանված են մի շարք հիմնահարցեր, ինչպես 1918-1920 թթ. հայկական բանակի, այնպես էլ խորհրդային Հայաստանի Հայկական կարմիր բանակի /1920-1922 թթ./ և /1922-1945 թթ./ զոյության ունեցած հայկական ազգային զորամիավորումների գործունեությունը: Աշխատության մեջ բազմաթիվ արժեքավոր փաստեր կան, որոնք հնարավորություն են տալիս հստակապես ավելի հիմնարար կերպով ճանոթանալ 1941-1945 թթ. զոյություն ունեցած հայկական զինված կազմավորումների մասին:

Արժանին մատուցելով հեղինակի կատարած աշխատանքին, ցանկանում ենք նշել, որ Հայաստանի առաջին հանրապետության բանակի պատմությունը ամբողջովին չէ, որ լուսաբանված է և աշխատության գերակշիռ մասը վերաբերում է խորհրդային ժամանակաշրջանում զոյություն ունեցած կազմավորումներին: Այս առումով գտնում ենք, որ մեր սույն աշխատությունը

նր որոշակի նորություն կարող է բերել հայ պատմագրության մեջ:

Ուսումնասիրության գիտական նորությունը կապված է նաև այն հանգամանքի հետ, որ նրանում խնդիր է դրված անդրադառնալ միայն 1918-1920 թթ. որպես առանձնահատուկ մի ժամանակաշրջան հայկական բանակի պատմության մեջ, որը մյուս ժամանակաշրջանների հետ կապված է միայն երկրորդական թելերով և առանձին գիտական ուսումնասիրության կարիք է զգում:

Այս ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական կարևոր նշանակություն: Հայկական բանակի կազմավորման և գործունեության համակողմանի ու գիտական ուսումնասիրությունը, նրա թույլ և ուժեղ կողմերի բացահայտումը մեզ հնարավորություն կտա խուսափել նաև այսօրվա ռազմական շինարարության գործում հնարավոր սխալներից ու վրիպումներից: Աշխատության մեջ բերված նյութերը կարող են Օգտագործվել Հանրապետության բուհերի մասնագիտական ամբիոնների կողմից հատուկ դասընթացների կազմակերպման և անցկացման ժամանակ, ինչպես նաև զինվորական ուսումնարանների դասընթացներում և ընդհանրապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Աղբյուրները ԵՎ ՀԱՐԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.— Ուսումնասիրությունը մեծամասամբ հիմնված է արխիվային փաստաթղթերի վրա: Աղբյուրագիտական հիմքը հանդիսանում են այն փաստաթղթերը, որոնք հեղինակը հավաքել է Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվից:

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծման նախապատմության, կառուցվածքի, թվականի, սպառազինության, համալրման, սպայական /հրամանատարական/ կազմի, ինչպես նաև բանակի մարտական գործողությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկությունները քաղված են Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական արխիվի 121-րդ /Առաջին համաշխարհային պատերազմում գործող հայկական կազմավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու/, 198-րդ /Հայաստանի Հանրապետության խորհրդարան/, 199-րդ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդ/, 222-րդ /Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդ/, 200-րդ /Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն/, 290-րդ /Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարություն/, 294-րդ /Գլխավոր սանիտարական վարչություն/, 196-րդ /Մայիլլյան եղբայրների գիտական էքսպեդիցիան Հայաստանում/, 276-րդ /Հայկական դիվանագիտական միսիան Վրաստանում 1919-1920 թթ./ և 43-րդ /Գեներալ Թովմաս Շաքարբեկյանի անձնական արխիվ/:

Ֆոնդերից:

Բացի արխիվային նյութերից աշխատանքի համար կարևոր աղբյուրա-
գիտական հիմք են հանդիսացել նաև մի քանի վավերագրական ժողովածու-
ներ¹ և ժամանակի պարբերական մամուլը²:

Ուսումնասիրության ընթացքում ժողովրդական են տարբեր ժամանակ-
ներում հրատարակված օրենքներ³, մեկնադրություններ⁴ և Հայաստանի ա-
ռաջին հանրապետության պետական ու զինվորական գործիչների աշխատու-
թյուններ, հուշագրություններ⁵, ինչպես նաև ընդհանուր բնույթի մի

1 Գ. Լազյան, Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրե,
1942, Великая октябрьская социалистическая революция и
победа Советской власти в Армении, Сборник документов, Е-
реван, 1957, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեվոլյուցիան և
սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի
և նյութերի ժողովածու, Երևան, 1960, Саркисян, В. К. Из исто-
рии иностранной интервенции в Армении в 1918 г., Докумен-
ты и материалы, Ереван, 1970, Հայաստանը միջազգային զինված-
գիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթե-

րույթ [1828-1923 թթ.], Երևան, 1972, Նախիջևան-Շարուրը 1918-
1921 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Բաղբեր Հայաս-
տանի արխիվների, հ. 2, Երևան, 1994:

2 ,,Կառավարության լրագրեր,, 4 սեպտեմբերի, 1919 թ., ,,Վերա-
ծնունդ,, ամսագիր, Փարիզ, 1919, ,,Ռազմիկ,, Հայաստանի Հանրա-
պետության զինվորական նախարարության շաբաթաթերթ, 9 հունիսի,
1920 թ.:

3 Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Մ-1918, Մ-1919, Մ-
1920 թթ.:

4 И. Кузнецова, Крах турецкой интервенции Закавказье 1920-
1921 гг., "Вопросы истории, №9, Москва, 1951., Յափուճ -
յան Ավետիս, Հայաստանի Հանրապետության քաղաքական, զինվորա-
կան, տնտեսական, ընկերային կացությունը, Գահիրե, 1972, Ս. Խ.
Կարապետյան, 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետա-
կան Ռուսաստանը, Երևան, 1965, Ա. Հ. Հարությունյան, Թուրքա-
կան ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կը-
ռիվները, Երևան, 1964, Է. Ա. Զոհրաբյան, Սովետական Ռուսաստա-
նը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, 1979, Է. Ա.
Զոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերություննե-
րը, ,,Երեկոյան Երևան,, 1990-1991 թթ., Ս. Աֆանասյան, Սար-
դարապատի հաղթանակը, Հայաստան, մայիս, 1918 թ., Երևան, 1991,
Վ. Գևորգյան, Լեւոնհայաստանի հերոսամարտը, 1919-1921 թթ., Ե-
րևան, 1991, Հ. Գևորգյան, Դրո, Երևան, 1991:

5 0. Բուլդիկին, Վեց բանտ և երկու հեղափոխություն, Ալեքսանդրիա,
1933, Հ. Սահակյան, Երկու տարի հայկական բանակին մեջ, Փարիզ,
1937, Ա. Բաբալյան, Էջեր Հայաստանի անկախության պատմությու-
նից, Գահիրե, 1951, Հ. Իրազեկ, Մոտիկ անցյալից, Բեյրութ, 1956,
Հ. Տեր Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921,
Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Հ. 1, Գահիրե, 1955, Գ. Սյուր-

թանի կոլեկտիվ աշխատություններ¹:

1918-1920 թթ. իրադարձություններին նվիրված բազմաթիվ գրքեր են
հրատարակվել ինչպես արտասահմանում, այնպես էլ Հայաստանում: Իրենց
բնույթով դրանք կարելի է բաժանել չորս խմբի՝ սփյուռքահայ, խորհրդա-
հայ, թուրք և արևմտյան ուսումնասիրողների աշխատություններ: Անաչառ
հայ, թուրք և արևմտյան ուսումնասիրողներից գրե-
լինելու համար պետք է նշել, որ վերոհիշյալ ուսումնասիրողներից գրե-
թե ոչ մեկը այս կամ այն պատճառով ճշմարտացի և զիտական մոտեցում չի
ցուցաբերել այդ բոլոր ժամանակաշրջանի իրադարձություններին լուսաբանե-
լիս: Խորհրդահայ պատմաբանները Հայաստանի առաջին հանրապետությունը և
նրա կառավարության ողջ գործունեությունը, այդ թվում նաև երկրի ռազ-
մական շինարարության ոլորտի հարցերը ներկայացնում են ճուշակ հայելու
մեջ: Գրեթե նույն մոտեցումն ունեն թուրք պատմաբանները, որոնք ընդհան-
րապես հայկական կանոնավոր զինված ուժերի գոյությունը համարում են
միայն դաշնակից տերությունների Օգնության և շահագրգռվածության արդ-
յունք: Արևմտյան պատմաբանները հարցին մոտենում են շատ մակերեսորեն,
նրանց աշխատություններում մեծապես շրջանցված են հարցերը, որոնք վե-
րաբերում են Անդրկովկասյան հանրապետությունների ռազմա-դիվանագիտական
րաբերում են Անդրկովկասյան հանրապետությունների ռազմա-դիվանագիտական
քաղաքականության վերլուծությանը: Սփյուռքահայ պատմաբանները հարցի ու-
սումնասիրմանը ցուցաբերում են զուտ կուսակցական մոտեցում: Նրանք, ով-
քեր նախկինում եղել էին առաջին հանրապետության պետական-քաղաքակա-
ն գործիչներ, անտեսում են կամ մակերեսորեն են ներկայացնում երկրի ռազ-
մական շինարարության գործում եղած թերությունները, քանակի թույլ կող-
մերը, հրամանատարական կազմի գործած սխալները: Այնուամենայնիվ ներկա-
յում տարբեր տարիներին սփյուռքում հրատարակված աշխատությունները մը-
նում են ամենահարուստ փաստական նյութը պարունակող գործերը: Այս տե-
սակետից ուշագրավ են հատկապես Սիմոն Վրացյանի, Ալեքսանդր Խատիսյանի,
սակետից ուշագրավ են հատկապես Սիմոն Վրացյանի, Ալեքսանդր Խատիսյանի,
Ռուբեն Տեր Սիմասյանի հրատարակած աշխատությունները, ակնհայտոր պատմա-

մենյան, Տաճկահայ զինվորը և զինվորականությունը Նախ տաճկական
պաշտպանական բանակներում մեջ, Բեյրութ, 1967, Տ. Բաղդասարյան, Հա-
յաստանի Հանրապետության վերջալույսին, Փարիզ, 1937, Կ. Սասունի,
հայ-թուրքական պատերազմը, ,,Հայրենիք,, ամսագիր, հ. 26, Բոստոն, 1926թ.
Ավո, Նժդեհ, Բեյրութ, 1966, Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության
Վրաց, Նժդեհ, Բեյրութ, 1966, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրա-
պետություն, Թեհրան, 1982, Ռ. Տեր Սիմասյան, Հայ հեղափոխականի մը հի-
շատություններ, հ. 7, Երևան, 1990:

1 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1976, Армянский воп-
рос, Энциклопедия, Ереван, 1991, Военный энциклопедический
словарь, Москва, 1984, Великая октябрьская социалистичес-
кая революция, Энциклопедия, Москва, 1987.

բան Ռիչարդ Հովհաննիսյանի, Հայաստանի Հանրապետության, լանգլե-
րեն/ Երկհատոր ուսումնասիրություններ և Վարդան Գևորգյանի, Հեռահա-
յաստանի հերոսամարտը 1919-1921 թթ., մեկագրություններ:

Սիմոն Վրացյանի, Հայաստանի Հանրապետություն, գրքում կան փա-
տական հարուստ տվյալներ հայկական բանակի մասին: Հատկապես արժանահի-
շատակ են Հայաստանի Հանրապետության բանակի թվականների, տեղաբաշխվածու-
թյան, Անանի լեռային ռազմական նավատորմի, ինչպես նաև տարբեր ժամանա-
կահատվածներում հայկական բանակի կառուցվածքի վերաբերյալ հեղինակի բե-
րած տվյալները և տեղի ունեցած ռազմական գործողությունների մասնակցու-
թյուններ:

Ալեքսանդր Խատիսյանի, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զար-
գացումը, գրքում հիմնականում ներկայացված են հանրապետության բանակի
զինվորական գլխավոր հրամանատարության և զինվորական նախարարության առ-
ջև երկրի ռազմական ուղորդում կանգնած խնդիրները, միաժամանակ աշխատու-
թյան մեջ կան կարևոր տեղեկություններ բանակի վիճակի, թվականների, ինչ-
պես նաև համալրման վերաբերյալ, ինչպես այս, այնպես էլ Ս. Վրացյանի
աշխատությունների թերությունները հանդիսանում է այն, որ նրանցում հայ-
կական զինված ուժերի ստեղծման և երկրի ռազմական շինարարության հար-
ցերը ներկայացված են մակերեսորեն, ինչը մեզ հնարավորություն չի ըն-
ձեռում առարկայական և ամբողջական պատկերացում կազմել պետական շինա-
րարության այդ բնագավառի մասին:

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության ստեղծման,
հայկական բանակի սպայական կազմի, բանակի կազմակերպական համակարգի,
թվականների և կառուցվածքի մասին արժեքավոր տեղեկություններ են պարու-
նակում Հայաստանի Հանրապետության թվով երրորդ զինվորական նախարար
Ռուբեն Տեր Սինասյանի, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հուշե-
րում:

Սեր աշխատանքի համար բավականաչափ արժեքավոր նյութեր են հայտնա-
բերվել Հայաստանի առաջին հանրապետության զինվորական առաջին նախարար
Հովհաննես Հախվերդյանի, Ռազմական ուրվագծեր 1918-1921 թթ. Հայաստա-
նի մասին, անտիպ հուշերում, որոնք պահպանվում են Հայաստանի Հանրա-
պետության պատմության պետական արխիվի 45-րդ ֆոնդում:

Ուսումնասիրվող թեմայի հետ առնչվում են նաև խորհրդային ժամա-
նակաշրջանում սպազմված մի քանի աշխատություններ, որոնք չնայած դադա-
փարական նպատակաւղղվածությանը ընթերցողին են մատուցում մի շարք ար-
ժեքավոր նյութեր, որոնք անշուշտ Օգտագործվել են սույն աշխատության
մեջ: Դրանցից է Ա. Հ. Հարությունյանի, Թուրքական ինտերվենցիան Ան-

դրիկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, գիրքը լեռան, 1984թ. լ
Այն հանդիսանում է 1971 թ. ռուսերեն լույս տեսած, հովհաննես ռազմա-
ճակատը 1914-1917 թթ., ուսումնասիրության շարունակություններ: Երկու
աշխատություններն էլ ռազմական պատմությանը վերաբերող արժեքավոր գոր-
ծեր են: Հատկապես մեծ է, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ.
և ինքնապաշտպանական կռիվները, գրքի նշանակությունը հայկական բանա-
կի նախապատմությանը ծանոթանալու տեսանկյունից: Գրքի մեջ հանգամանո-
րեն վերլուծվում են ռուսական բանակի նահանջի պատճառները, նրա կազ-
մակերպումն ու ճակատի մերկացումը, ռազմական ուժերի փոխհարաբերու-
թյունն ու տեղաբաշխումը 1918 թ., որոնք պարզում են ժամանակի ռազմա-
քաղաքական իրադրությունը և այն մթնոլորտը, որի պայմաններում էլ ըս-
կըսվեց հայկական բանակի կազմավորման գործընթացը: Առանձնապես կարե-
վոր են գրքի երրորդ և չորրորդ գլուխները, որոնք նվիրված են բանակի
ազգայնացման, հայկական կորպուսի և ռազմական կազմակերպությունների
ծրագրերի և գործունեության խնդիրների լուսաբանմանը: Զնայած այս ամե-
նին մենք գտնում ենք, որ հատկապես բանակի ազգայնացմանը և 1918 թ.
Թուրքական արշավանքների ժամանակ հայկական կադրային գործառնների դերին
նվիրված խնդիրները դեռևս կարիք են զգույն լրացուցիչ ուսումնասիրու-
թյունների և պարզաբանումների:

Ուսումնասիրվող թեմայի համար հետաքրքրություն են ներկայացնում
նաև մի քանի աշխատություններ, որոնք նվիրված են 1920 թվականի իրա-
դարձություններին և Թուրք-հայկական պատերազմին: Դրանցից է Ս. Խ. Կա-
րապետյանի, 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստա-
նը, գրքույկը լեռան, 1965 թ. Աշխատության մեջ կան մի շարք արժանա-
հիշատակ փաստեր, սակայն հեղինակը ավելի շատ փորձում է խորհրդային
Ռուսաստանի դիրքորոշումն արդարացնել, քան անդրադառնալ պատերազմին:

1920 թ. ռազմա-քաղաքական իրադրության լուսաբանման առումով արժե-
քավոր են Է. Ա. Ջոհրաբյանի, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական
հարաբերությունները 1920-1922 թթ., գիրքը լեռան, 1979թ. և, 1920թ.
Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, աշխատություններ, որը
հատկապես լույս է տեսել, Երեւանի Երևան, Թերթում 1990-1991թթ.
Օգտագործելով նորահայտ կամ նվազ հայտնի բազում փաստաթղթեր նա թարմ
մեկնակետից լուսաբանել է հայոց պատմության այդ ժամանակաշրջանի առաջ-
նոր խնդարյունված շատ էջեր: Հանգամանորեն ներկայացված են Թուրք-հայ-
կական պատերազմում ռազմական ուժերի փոխհարաբերություններ, նրանց ղապավորվա-
րուստ նյութեր հայկական բանակի ստորաբաժանությունների, նրանց ղապավորվա-
ծության, զինվորների և սպաների թվի մասին: Աշխատության մեջ շարադր-

յին հատուկ զինվորներ, պահեստային հետևակային բրիգադից՝ բաղկացած երկու պահեստային զնդերից և չորս թիֆլիսի, Նրանի, Երկազավետովի և Նախիջևանի՝ առանձին գումարտակներից: Բացի վերոհիշյալ զորամասերից, հայկական կորպուսի մեջ մտնում էին նաև հրացանակազեն զորացրային, հրետանային-հրասանդային զինվորները, կարսի ու Ալեքսանդրապոլի բերդապահ հրետանին, կարսի և պարտիզանական հեծյալ զնդերը, Լոռու տեղական, Շուշու, Ախալքալաքի հրաձգային հայկական զնդերը, Ղազախի հայ-ռուսական հրաձգային գունդը, Ախալցխայի և Շուխու հրաձգային հայկական գումարտակները, Լոռու պահակային գումարտակը, Ալեքսանդրապոլ-Ջուլֆա և Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղին պահպանող երկու գումարտակներ, սակրավորներ և կարսի սակրավորներ գումարտակները, ավտոմոբիլային վաշտեր, ինչպես նաև 3-րդ կովկասյան ավիոշոկատը: Հայկական կորպուսի կազմում կար նաև եթոսպաների լուստերսպաների զորոց, ուսումնական զորախումբ, ռազմասանիտարական հաստատություններ՝ տասը հոսպիտալ, վիրաբուժական շուկատներ և այլն¹:

Քանի որ Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի պայմանագրով, Թուրքիան, թույլ էր տալիս, Հայաստանի նորաստեղծ հանրապետությանը ունենալ զինված ուժեր, որոնք պետք է չգերազանցեին մեկ հետևակային զինվորին,² ուստի հայկական բանակային կորպուսը ենթարկվեց վերակազմավորման, որի հետևանքով պետք է ստեղծվեր հետևակային մեկ զինվորին: Կորպուսի վերակազմավորման աշխատանքներին ներառվել էր նաև հրամանատարությունը: Վերակազմավորման սկզբնական աշխատանքները սկսվեցին կորպուսի հրամանատար գեներալ թ. Շաքարբեկյանի ղեկավարությամբ: Վերակազմավորման աշխատանքները ավարտվեցին 1918 թ. Օգոստոսին, որի արդյունքում հայկական կորպուսի փոխարեն ստեղծվեց հայկական առանձին զինվորին, բաղկացած վեց հետևակային զնդերից, հեծելազորից, ինժեներական վաշտից, ավիացիոն և ռադիոհեռագրային շուկերից և մի քանի այլ Օժանդակ զորախմբերից³, 1919թ. հունվարին զինվորին նորից վերակազմավորվեց, որը պայմանավորված էր Թուրքիայի առաջին աշխարհամարտում կրած պարտությամբ: Դրանից հետո Հայաստանի Հանրապետությունը հեռավորություն ստացավ կտրուկ կերպով ավելացնել իր զինված ուժերի թվաքանակը:

1919 թ. հունվարին զինվորական նախարար գեներալ Հախվերդյանի հր -

- 1 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 1-5;
- 2 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 323;
- 3 ՀՀ տե՛ս ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 9-10.

րամանով, հայկական առանձին զինվորին վերակազմավորվեց: Մեկ առանձին հետևակային զինվորին փոխարեն ստեղծվեցին 3 առանձին հետևակային բրիգադներ, յուրաքանչյուրը բաղկացած երկուական հետևակային զնդերից, Հայկական առանձին բրիգադների հրամանատարներ նշանակվեցին առաջինում՝ գեներալ-մայոր Դանիել Բեկ ֆերուսովը, երկրորդում՝ գեներալ-մայոր Արտեմ Հովսեփյանցը, իսկ երրորդում՝ գեներալ-մայոր Բոգդան Բաղդասարովը¹:

1919 թ. սկզբին ՀՀ ռազմական նախարարությանը առընթեր ստեղծվեց նաև ռազմական խորհուրդ, որը կոչվեցավ նաև պետք է ֆենարկեր ռազմական շինարարության ու մարտական գործողությունների սկզբունքային հարցերը և որոշումներ կայացներ դրանց վերաբերյալ: Ռազմական խորհրդի կազմի մեջ մտան զինվորային ավագ զորահրամանատարներ ու զինվորական նախարարության վարչությունների պետերը²: 1919 թ. մարտի 25-ին այդ խորհրդի անփոփոխ նախագահ նշանակվեց հայկական կորպուսի Նախկին հրամանատար գեներալ-լեյտենանտ թ. Հ. Շաքարբեկյանը³: Մի փոքր ժամանակ անց, Հայաստանի կառավարության ապրիլի 24-ի հրամանագրով, նրան հանձնարարվեց նաև Հայաստանի Հանրապետության զորքերի գլխավոր հրամանատարի լսարարարների պարտականությունը⁴:

Արտեմիսություն այս գլխի մեջ այնուհետև մանրամասն ներկայացվում են բանակի բոլոր կառուցվածքային փոփոխությունները մինչև 1920 թ. վերջը:

Երկրորդ գլուխը վերնագրված է ,Հայկական բանակի սպառազինություններ և համալրումը: Բանակի սպայական կազմը, Սյստեղ ներկայացված է հայկական բանակի սպառազինությունը սկզբնական շրջանում և նրա փոփոխությունները հաջորդ երկու տարիներին:

Սկզբնական շրջանում, ավելի ճիշտ՝ 1918 թ. մինչև 1920 թ. մայիսը, Հայաստանի Հանրապետության բանակի սպառազինումը տեղի էր ունենում հիմնականում ռուսական նախկին Կովկասյան բանակի կողմից Հայաստանի տարածքում թողնված զենքի և զինամթերքի հաշվին: Այդ իսկ պատճառով Հանրապետության բանակը հիմնականում զինված էր ռուս զինատեսակներով, ինչպիսիք էին ռուսական բանակի սպառազինության մեջ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

1918 թ. սերտեմբերի դրությամբ հայկական բանակի հիմնա-

- 1 ՀՀ տե՛ս ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2;
- 2 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2;
- 3 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 4
- 4 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 129, թ. 1:

կան զեկներ՝ ռուսական 1890 թ. տիպի 7,62 մմ-ոց, Մոսին, համակարգի եռազին հրացաններն էին: Բացի դրանից սպառազինության մեջ կային նաև, լեգեբելի, և 1868 թ. տիպի, ժամանակի համար արդեն հնացած, , Բերդան-կա, համակարգի հրացաններ: Գնդացիներից բանակի սպառազինության մեջ էին , Մաքսիմ, , , Կոլտ, , , Լյուդս, , , ինչպես նաև ոչ մեծ քանակությամբ այլ համակարգի զենացիներ: Հայկական բանակի հրետանին բաղկացած էր հիմնականում մարտում հետևակազորին աջակցելու համար նախատեսված 3 դյույմանոց թեթև և լեռնային թնդանոթներից, ինչպես նաև ռուսական մակնիշի 40 մմ-ոց հաուբիցներից: Բանակի սպառազինության մեջ էին գտնվում նաև սառը զինատեսակները, ինչպիսին էին սվինները, թրերը և խանչակները¹: Բանակի հանդերձանքը ևս ռուսական արտադրության էր: Ռուսական բանակից մնացած ինքնաթիռներով էր սպառազինված և 1916 թ. Օգոստոսի վերջին հայկական կորպուսի 3-րդ կովկասյան ավիոշոկատի հիման վրա կազմավորված ավիոշոկատը: Նրա առաջին հրամանատարն էր Նշանակվել Օդաշու պորուչիկ Վոիպովը:

1919 թ. մարտին, կարսը Հայաստանին վերադարձնելուց հետո, այդտեղ ավարտվեցին Նոր հայկական ավիոշոկատի կազմավորման աշխատանքները: Մինչև 1919 թ. հոկտեմբեր այստեղ կարգավորվեցին պահեստները և անգարները, կարգի բերվեցին թռիչքադաշտը և ինքնաթիռների նորոգման ու հավաքման արհեստանոցները: Հայկական ավիոշոկատը հիմնականում համալրված էր , Վուազեն, , , Մոռան, և , , Նյուպոն, , մակնիշի ինքնաթիռներով, որոնց քանակը անսարքների հետ միասին հասնում էր 7-8-ի: Սակայն Հայաստանում ավիոպահեստամասերի բացակայության պատճառով, ինքնաթիռների մի զգալի մասը մշտապես գտնվում էր անսարք վիճակում: 1919 թ. վերջին ավիոշոկատում թռիչքի համար պիտանի էին միայն մեկ , Մոռան, և մեկ , Նյուպոն, , մակնիշի ինքնաթիռները²:

1920 թ. մայիսից Հայաստանի Հանրապետության բանակի սպառազինության և հանդերձավորման կարիքները բավարարվում էին դաշնակից տերությունների, մասնավորապես Անգլիայի կառավարության առաքույների հաշվին: 1920 թ. հուլիսի 25-ին Փոթիի նավահանգիստ ժամանած անգլիական նավով հայկական բանակի համար բերվեց 25 հազար , Բոշ, համակարգի հրացան, 400 թեթև , Մաքսիմ, , համակարգի զենացի, 58.000.000 , Վիկերոս, , կարգի փամփուշտ, 40.000 հատ հեռադիտակ, ինչպես նաև ղեկորայք և վիրաբու-

¹ Տես ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 5:

² Տես ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 46-53:

ժական զործիքներ¹: Սակայն այդ բեռների միայն մի մասն էր հասնում Հայաստան, քանի որ Վրաստանի կառավարությանը, որպես փոխադրված, մեծ-տապես բռնազրավում էր այդ զենքի և զինամթերքի 27 տոկոսը, դրանով իսկ մեծ վնաս պատճառելով հայկական բանակի սպառազինմանն ու մարտունակու-

թյանը²: Հայաստանի բանակին զինամթերքով և հանդերձանքով ապահովելու դործը զգալի չափով կատարվում էր նաև Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության համբարակային վարչության ենթակայության տակ զտնդվող ռազմական արհեստանոցների և զործարանների միջոցով, ներմուծված և տեղական հումքի հաշվին: Այսպես, Օրինակ, մինչև 1920 թ. Օգոստոսի 1-ը Երևանի և Կարսի ճարտարագիտական արհեստանոցներում բանակի համար պատրաստվել են 2896 տարբեր տեսակի տառներ, 17.000 հատ թուր, 3500 թուխըրներ, 470 հատ լինգեր, 45 սեղան, 190 աթոռ, 25.225 ամրաշինության զործիքներ և 17 պահարաններ: Շուրջ ժամանակահատվածում այդ արհեստանոցներում հավաքվել է 85.000 հատ ձեռքի ռումբ, 743 փութ զինամիտ, 3971 փութ պիրոկլիտին, [պայթուցիկ նյութ], 17.600 շրջանակ վիկիորդյան քուշ, 150.000 ճաթուկ և 73.660 ձեռքի և այլ ռումբերի համար նախատեսված պայթուցիչներ: 3

Հայկական բանակի համալրման կարիքները բավարարվում էին նաև Հայաստանի մյուս դաշնակցի՝ գեներալ Ա. Դենիկինի Ռուսաստանի հարավի կամավորական բանակի կողմից, որի հետ կապը հաստատվել էր 1918 թ. նոյեմբերից:

Ինչպես մատնանշում է զինվորական նախարար Ռուբեն Տեր Մինասյանը, 1920 թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում, երբ գրեթե լրիվ սպառված էին հայկական բանակի փամփուշտի պաշարները, Դենիկինի բանակից ստացվում է ռուսական Մոսկոյի հրացանի մոտ 3. 000.000 փամփուշտ: , Եթե այդ ռազմամթերքը չհասներ, իրոք Հայաստանը զինաթափ կարելի էր համարել այդ թվականներին, - գրում է Ռ. Տեր Մինասյանը, - այդ փամփուշտները փրկեցին մեզ և միջոց տվին հետագա կռիվները առաջ տանելու³:

¹ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 359:

² Տես ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 76:

³ Տես ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 184-190:

⁴ Ռուբեն Տեր Մինասյան, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. 7, Երևան, 1990, էջ 261:

Հայկական բանակը գինամթերքով Օգնություն ստացավ նաև Ա. Դենիկե-
նից հետո կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը ստանձնած
զենքերը Պ. Ն. Արանգելից։ Մասնավորապես 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր
ամիսներին զաղտնի՝ անկողնային պիտույքների տեսքով, Սերձավոր Արևել-
քի ամերիկյան *Near East Relief* օգնության կոմիտեի միջոցով, Ղրիմից գը-
նացքով Վրաստանով Ալեքսանդրապոլ հասցվեցին հրետանային թեթև արկեր և
ծվազոն փամփուշտ¹։

Հայաստանի Հանրապետության բանակի կանոնավոր զորամասերը և ստորա-
բաժանումները համալրվում էին Հայաստանի խորհրդարանի կամ կառավարու-
թյան կողմից ընդունված Օրենքների ու որոշումների հիման վրա։

Համաձայն կառավարության 1919 թ. հուլիսի 1-ի, «Ազգաբնակչության
վիճակագրության, զինապարտների հաշվառման ու զորակոչի մասին», ընդու-
նած Օրենքի, հանրապետության բանակում Հայաստանի քաղաքացիները զինվո-
րական ծառայության էին զորակոչվում 18 տարեկան հասակում²։

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանող-
ները բանակ էին զորակոչվում 20 տարեկան հասակում, իսկ միջնակարգ դր-
րոցի աշակերտները զորակոչի էին ենթակա միայն դպրոցն ավարտելուց հետո։
Թե՛ առաջինների և թե՛ վերջինների համար բանակում ծառայության ընդհա-
նուր ժամկետը նույնպես սահմանված էր 18 տարի, որից 9 ամիսը՝ որպես
խսկական ծառայության, իսկ 17 տարի և 3 ամիսը՝ որպես պահեստազորային-
ների։

Նույն Օրենքով սահմանվում էր նաև Հայաստանի 16-ից 43 տարեկան
արական սեռի բոլոր քաղաքացիների պարտադիր ծառայության զինվորական հաշ-
վառում։ Արտոնություններ տրվում էին անաշխատունակ ճնողներ ու նեցող
ընտանիքի միակ կերակրողներին³։

Զորակոչի ենթակա էին նաև փոստ-հեռագրատան հիմնարկությունների
ծառայողները, երկաթգծի, միլիցիայի, դատական մարմինների աշխատակիցնե-
րը, ինչպես նաև զավառային և թաղային կոմիսարները և նրանց Օգնականնե-
րը։ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամաս-

1 Տե՛ս С. И. Кузнецова, Крах турецкой интервенции в Закавказье
1920-1921 г.г., Вопросы истории, №9, 1951, стр.145.

2 Տե՛ս ՀՀ Կողմ, ֆ. 199, ց. 1, գ. 41, թ. 34։

3 Տե՛ս ՀՀ Կողմ, ֆ. 199, ց. 1, գ. 65, թ. 129։

նություններին ներկայացուցիչներին, զինվորական ծառայության էին զորա-
կոչվում միայն եզդիները, որոնք ծառայում էին իրենց ազգային զորամա-
սերում։

Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմը բաղկացած էր
առևտական զինվորական զիմնազիաներ և ուսումնարաններ ավարտած, առևտ-
կան բանակում ծառայած, առաջին համաշխարհային պատերազմի ռազմաճակատ-
ներում կռիված կադրերից։

Բանակում պահպանված էր սպայական, շարքային և դասական զինվորա-
կան այն կոչումները և աստիճանները, ինչպիսիք որ գոյություն ունեին
առևտական բանակում։ Սպայական կոչումներն էին պրպորշչիկ [վառատար],
պոդպոռուչիկ [փոխեղակալ], պոռուչիկ [տեղակալ], շտաբ կապիտան [փոխ-
գլխապետ], կապիտան [գլխապետ], պոդպոլկովնիկ [փոխդապետ], պոլկովնիկ
[զնդապետ], զենեռալ-մայոր [կրտսեր զորավար], զենեռալ էյտենանտ [ա-
վագ զորավար] և ինֆանտերիայի կամ լրիվ զենեռալ¹։ Բանակի շարքային
կազմի աստիճաններն էին. շարքային [զինվոր], քիբեյտոր [հեգապետ], կըրտ-
սեր ենթասպա [տասնապետ], ավագ ենթասպա [քսանհինգապետ], ֆելդֆեբել
[խմբապետ և պոդպրպորշչիկ [փոխվառատար]²։ Դասական աստիճաններն էին
կոլեծսկի ռեզիստրատոր [կոլեզիական ռեզիստրատոր], Գուբերնսկի սեկրե-
տար [նահանգային քարտուղար], կոլեծսկի սեկրետար [կոլեզիական քարտու-
ղար], տիտուլյառնի սովետնիկ [տիտուլյար խորհրդական], կոլեծսկի ասե-
սոր [կոլեզիական ասեսոր], նադվոռնի սովետնիկ [արթունական խորհրդա-
կան], կոլեծսկի սովետնիկ կամ ստատսկի սովետնիկ [կոլեզիական կամ պետա-
կան խորհրդական], տայնի սովետնիկ [զաղտնի խորհրդական և ղեյսսովիտել -
նի տայնի սովետնիկ [խսկական զաղտնի խորհրդական]։ Այդ դասական աստի-
ճանները հավասարազոր էին համապատասխանաբար վառատարի, փոխեղակալի,
փոխգլխապետի, գլխապետի, փոխզնդապետի, զնդապետի, կրտսեր զորավարի, ա-
վագ զորավարի և զորավարի կամ լրիվ զենեռալի սպայական աստիճաններին³։
Արտեսիստության երկրորդ գլխի վերջին մասում, որը վերաբերում է բանա-
կի սպայական [հրամանատարական] կազմին մանրամասն ներկայացված է հայ-
կական բանակի զենեռալիտեր և ավագ սպայական կազմը։ Տրված են նաև նը-
շանավոր զորավարներ⁴ թ. Նազարբեկյանի, Դուռնիսյանի [Դուռնիսյանովի],
Բ. Արարատյանի, Մ. Սիլիկյանի, Դ. Բեկ ֆիրուսյանի, Պ. Բեկ ֆիրուսյանի
կենսագրականները։

1 ՀՀ Կողմ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 569։

2 ՀՀ Կողմ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 209։

3 ՀՀ Կողմ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 205։

Երրորդ գլխին վերնագրված է «Հայաստանի Հանրապետության բանակի զործուներությունը 1918-1920 թթ.»։ Այստեղ հիմնականում շարադրված են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մասնակցությունը պատերազմական զործուներություններին և ներկայացված է բանակի դերը հանրապետության քաղաքական կյանքի համասարակշռության կարգավորման գործում։

Սկզբում շարադրված է հայ-վրացական պատերազմում հայկական բանակի մարտական զործուներությունների ընթացքը։ Դարավոր բարեկամություն ունեցող հայերի և վրացիների միջև պատերազմը ծագեց Բորչալուի գավառի հայաբնակ տարածքները հատկապես Ղուին գավթելու Վրաստանի քաղաքականության հետևանքով։

Հայ-վրացական պատերազմը սկսվեց 1918 թ. դեկտեմբերի 11-ին, երբ Ալեքսանդրապոլից ուղարկված հայկական 4-րդ հետևակային զեղի առաջին գումարտակը շարժվեց Ախալքալաքի գավառ և, առատ էլյան միջով, շարժվելով դեպի քաղաք, ճանապարհին ընդհարում ունեցավ փոքրաթիվ վրացական կայազորի հետ, որը կարճատև մարտից հետո, դիմեց նահանջի։ Դադարական բուռն զործուներությունները սկսվեցին դեկտեմբերի 12-ից։ Այս ռազմականությունը զործող հայկական զորքերի կազմի մեջ ներգրավվեցին 3-րդ բրիգադի 5-րդ և 6-րդ հայկական զեղերը, իրենց տրամադրված հրետանային դիվիզիոնով, որոնք տեղակայված էին Ղարաքիլիսայում և Դիլիջանում, 2-րդ հետևակային գումարտակը՝ 6-րդ հրետանային մարտկոցով, 4-րդ գումարտակը, որից մեկ գումարտակ արդեն ուղարկվել էր Ախալքալաք, ինչպես նաև զեղապետ Կորուկովի սահմանապահ հետյալ գումարտակը, որը տեղաբաշխված էր Շահալու-Վորոնցովկա ուղիղության վրա։ Բացի հայկական դիվիզիայի այս կանոնավոր զեղերից կային նաև աշխարհազորայիններից կազմավորված մի քանի վաշտեր, որից յուրաքանչյուրում կար 100-200 մարդ։ Այս ճակատում զործող հայկական կանոնավոր բանակի ընդհանուր թիվը կազմում էր 6000 սվին և 2000 աշխարհազորայիններ, 16-20 հրանոթներ։ Հայկական զորքերի ընդհանուր հրամանատարությունը հանձնված էր հայկական առանձին դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մովսես Միլիկյանին, որի շտաբը տեղակայված էր Ղարաքիլիսայում։ Գեներալ Մ. Միլիկյանի տված հրահանգների համաձայն հայկական զորքերը շարժվում էին երեքշարասնյա մարտակարգով։ Գլխավոր զորաշարասնյունը շարժվում էր Ղարաքիլիսա-թիֆլիս երկաթգծի ուղղությամբ։ Նրա ձախ թևից Վորոնցովկա-Եկատերինֆեյել ուղղությամբ շարժվում էր 5-րդ զեղի փոքրաթիվ շարասնյունը, իսկ աջ թևից 6-րդ զեղի մի զորամաս, որը ունեցել էր տեղական խմբերի հաշվին, առաջնում էր Այրումի ուղղությամբ։ Սանահինի մոտ վրացական զորքերի հետ դեկտեմբերի 20-ից 22-ը տեղի ունեցավ 1-3-ի ճակատամարտ, 45, 50, 1, 2, 32, 6։

դի ունեցած Գլխավոր շարասնյուն համառ կռիվները ավարտվեցին հայերի լիակատար հաղթանակով։ Հայկական զորքերի հաղթանակով ավարտվեցին նաև վրացիների հետ ձախ թևի զորաշարասնյա մարտերը, որի հետևանքով զրավեց Այրումը։ Այդ մարտից հետո հայկական զորքերի ձեռքն ընկավ 2 զրահազենաց, 3-րդ վրացիները պայթեցրին։ Բացի դրանից վրացիներից զրավվեց մեկ զենաց լրիվ կազմով և հագուստեղենով ու պարենով բեռնված 3-4 վագոն։ Այրումի մոտ տեղի ունեցած կռիվներում հայկական զորամասերը զրավեցին նաև վրացական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Մազնիկին պատկանող անձնական վագոնը, ինչպես նաև գերեզմարվեց մի ամբողջ վրացական գումարտակ, զեղապետ Էրիստովի գլխավորությամբ, որը պահակազորի ուղեկցությամբ ուղարկվեց Դիլիջան։ Հայկական զորքերը շարունակեցին իրենց առաջնադասումը և դեկտեմբերի 25-ին կոտրելով վրացիների համառ դիմադրությունը, զրավեցին Սադախուն և Շուշավերը։

1918 թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ Վրաստանի կորուստները կազմեց 1000 ռազմագերի, որից 40-ը սպա, միաժամանակ հայկական զորքերի կողմից վերցվել էր 300 վագոն, 15 շոգեքառ, 39 զենացիք և 3 զրահազենաց։ Այդ ժամանակամիջոցում վրացիները կենտրոնացնելով թվապես մի քանի անգամ գերազանցող ուժեր, անցան հարձակման և 4 0ր տևած համառ մարտերից հետո, ճեղքելով ճակատը, ետ զրավեցին Շուշավերը և շարժվեցին դեպի Սադախուն։ Հայկական զորքերը նահանջեցին դեպի Այրում։ Սակայն դեկտեմբերի 31-ին հայերը նորից անցնելով հարձակման, վերազրավեցին Սադախուն և սպառնացին թիֆլիսին։ Հենց այդ ժամանակ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների միջնորդությամբ կնքվեց զինադադար և 1918 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը ժամը 24-ից դադարեցվեց հայ-վրացական պատերազմը։ 1918 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 31-ը՝ 20 0ր տևած կարճատև հայ-վրացական պատերազմի արդյունքը եղավ այն, որ Հայաստանը փաստորեն կարողացավ իր տիրապետության տակ վերցնել Վրաստանի կողմից զավթված հայկական տարածքների մեծ մասը և ստիպեց վրացական կառավարությանը այսուհետև ավելի զգուշ և հարգալից վերաբերվել հայերին²։

Հայ-վրացական պատերազմից հետո բանակի հիմնական զործը եղավ կարսի մարզի զրավումը և հանրապետության մահմեդական բնակչություն ունեցող զավառներում հակապետական խռովությունների ճնշումը, ինչպես նաև հարևան Ադրբեջանի զավթողական նկրտումներին հակահարված տալը։

1918-1920 թթ. հայ-ադրբեջանական հարաբերությունների հիմնական

1 Յես ՀՀԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, ք. 373-374։

2 ՀՀԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, ք. 2-10։

կովախնէորը Զանգեզուրի և Ղարաբաղի պատկանելիութեան հարցն էր: Դեռևս 1918 թ. մայիսին, հայկական և ադրբեջանական զորքերը Զանգեզուրը Ադրբեջանին բռնակցեցելու նպատակով բազմաթիվ հարձակումներ գործեցին Զանգեզուրի վրա: Սակայն այնտեղ գտնվող զորավար Անդրանիկի, ապա գեղապետ Արսեն Շահմազյանի շնորհիվ ոչ մի արդյունքի չհասան:

Զանգեզուրում պետական իշխանութիւնը հաստատելու նպատակով 1919թ. ապրիլի վերջին Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը որոշեց այնտեղ տեղական ազաբնակչութիւնից կազմավորել զորամասեր՝ բաղկացած 1 հետևակային զնդից, 1 հետեւազորային դիվիզիոնից և 2 հրետանային մարտկոցից: Այդ նպատակով Երևանից Զանգեզուր ուղարկվեցին սպայական կազմեր և պորուշիկ Մելիք-Հարութիւնյանի հրետանային մարտկոցը: Զանգեզուրում կազմավորվող բոլոր զինված ուժերի գլխավոր հրամանատար Նշանակվեց գեներալ-մայոր Ղազարյանը, որը Գորիս ժամանեց 1919 թ. ամռանը:

Միաժամանակ տեղական իշխանութիւնը կազմակերպելու համար Երևանից Զանգեզուր մեկնեցին նաև ֆաղաքացիական անձինք: Հասնելով Գորիս, գեներալ Ղազարյանը ձեռնամուխ եղավ տեղական զինված ուժերի և տեղաբնիկներից կիսամիլիցիոներական զորամասերի կազմավորմանը: 1915 թ. Օգոստոսի վերջին, Հայ հեղափոխական դաշնակցութեան բյուրոյի առաջարկութեամբ, Զանգեզուր է ժամանում փոխգեղապետ Գարեգին Տեր Հարութիւնյանը [Շժղեհ], որը Նշանակվում է Ղափան-Գնդեազ-Գողթան շրջանների ընդհանուր հրամանատար¹: Շժղեհն այստեղ մնաց մինչև 1921 թ. հուլիսի կեսերը և մեծ դեր կատարեց Զանգեզուրի պաշտպանութեան գործում: 1919 թ. նոյեմբերի 2-ին Օրդուբադի կողմից Զանգեզուր ներխուժած ադրբեջանական զորքերը գրավում են Ոխլիի ձորը և այն հայտարարում Ադրբեջանի անբաժան մասը: Դրանից հետո ապստամբում է նաև Գեղվա ձորի ադրբեջանական գյուղերը, որի հետևանքով փակվում է Գողթանը, Զանգեզուրի հետ կապող միակ ճանապարհը և պաշարման հետևանքով առաջացած սովը ողբերգական վիճակի մեջ է զցում Գողթանի ու Բաղաբերդի հայ բնակչությանը: Նոյեմբերի 18-ին Շժղեհի գլխավորած Գնդեազի վաշտերը, հանկարծակի հարձակում գործելով Ոխլիի ձորի ադրբեջանական գյուղերի վրա, ջախջախում են նրանց և կրկին Հայաստանին են միացնում Ոխլիի ձորի Շաբադին, Ոխլի, Փերդովդան ու Արալըղ ադրբեջանաբնակ գյուղերը: Որա շնորհիվ վերականգնվում է Գողթանի, Բաղաբերդի և Զանգեզուրի միջև հաղորդակցութիւնը, կովի ընթացքում հայկական զոր-

1 Տե՛ս Անո, «Շժղեհ», Բեյրութ, 1968, էջ 79:

քերի ձեռքն է ընկնում մեծ քանակութեամբ հացահատիկ, գնեք, զինամթերք և այլ ռազմական ամար¹:

Հայաստանի և Ադրբեջանի միջև մյուս կովախնէորը Ղարաբաղն էր: Այս վեճում, ինչպես Վրաստանի հետ Հայաստանի Հանրապետութիւնը առաջարկում էր այն լուծել ազաբնակչության սկզբունքով: Սակայն ադրբեջանցիները, որոնք խրախուսվում էին անգլիացիների կողմից, չէին ուզում լսել հայերի արդարացի առաջարկութիւնը և մշտապես ոտնձգութիւններ էին գործում Ղարաբաղի դեմ, ձգտելով հայաթափ անել այն: Ղարաբաղը իրեն բռնակցեցելու նպատակով Ադրբեջանը լայնորեն Օգտագործում էր ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Զանգեզուրի ադրբեջանական ազաբնակչութեանը: Ղարաբաղը Հայաստանի Հանրապետութեան հետ միավորելու նպատակով Հայաստանի կառավարութեան կողմից 1919 թ. նոյեմբերին Զանգեզուր է ուղարկվում Դրոյն: Համաձայն գեներալ Հախվերդյանի հուշերի, Դրոյի առջև խնդիր էր դրված մաքրել Զանգեզուրի և Ղափանի հարավ-արևելյան սահմանները ադրբեջանական զինված հրոսակախմբերից և միջանցք բացել Զանգեզուրի ու Ղարաբաղի միջև՝ վերջինիս հետ մշտական հաղորդակցութիւնը հաստատելու համար: Այդ խնդիրն իրականացնելու նպատակով Դրոյի տրամադրութեամբ տակ դրվեց եփսպեղիցիոն զորաջոկատ, որը իր առջև դրված խնդիրը կատարեց փայլուն կերպով: Մինչև 1919 թ. դեկտեմբերի կեսերը զսպվեցին Զանգեզուրի խռովարար ադրբեջանական գյուղերը, բացվեց հաղորդակցութիւնը Զանգեզուրի և Ղարաբաղի միջև², Մինչև 1920 թ. հունվարի սկիզբը Դրոյի եփսպեղիցիոն զորաջոկատը, համագործակցելով Ղափանում գտնվող Շժղեհի հրամանատարութեամբ գործող զորախմբերի հետ, գրավեց Զանգեզուրի Շուրնուխ, Էյվազլաթ, Սազրան, Տանձավեր, Շավլու և Ուժանիս ադրբեջանաբնակ գյուղերը, որոնք աչքի էին ընկել Զանգեզուրի հայության նկատմամբ ոճրագործութիւններով: 1920 թ. ապրիլի 15-ին Դրոյի գլխավորած զորամասերը մտնում են Արցախ, այնտեղից դուրս վաճուճ ադրբեջանական զորքերին և իրենց ձեռքը վերցնում երկրամասի ողջ իշխանութիւնը: Սակայն 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջան մտնան խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի զորամասերը և Ադրբեջանում հաստատեցին խորհրդային կարգեր: Մեկ Օր անց խորհրդային Ադրբեջանի կառավարութիւնը Հայաստանի Հանրապետութեանը ներկայացրեց վերջնագիր՝ պահանջելով դուրս բերել հայկական զինված ուժերը Արցախից և Զանգեզուրից: 1920 թ. մայիսի 1-ին Ադրբեջանում տեղակայված 11-րդ կար-

1 Տե՛ս Վարդան Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը 1919-1921թթ., Երևան, 1991, էջ 36:

2 Տե՛ս ՀՀ ԿԴՄԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, ք. 19:

միւր բանակի հրամանատարութեանը, Օրջոնիկիձեի և Կիրովի ստորագրու-
թյամբ, խորհրդային իշխանութեան անունից պատերազմ հայտարարելու սպա-
նակիքով, նոր վերջնագիր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կա-
ռավարությանը և առանց սպասելու պատասխանի, իր զորամասերը շարժեց Ար-
ցախ և մինչև մայիսի 20-ը ամենուրեք հաստատեց խորհրդային կարգեր¹։ Հայ-
կական զորքերը չարկարկված են լինում թողնել Արցախը, խորհրդային զոր-
քերի դեմ պատերազմը համարելով անիմաստ, քանի որ ուժերը բավականաչափ
անհավասար էին։ Արցախը խորհրդայնացման ճանապարհով գրավելուց հետո,
հուլիսի 3-ին կարմիր բանակի 84-րդ բրիգադի 247, 248 և 249-րդ հրաձե-
րային զննորդ միւսում են Զանգեզուր և, չնայած հայկական զորքերի համառ-
դիմարդութեանը, գրավում են Գորիսը, Օգոստոսի 1-ին Դարալագյազից Դրոն
շարժվում է դեպի Գորիս։ Միաժամանակ նրա հրահանգով դեպի Գորիս են շարժ-
վում Ղափանից Նժդեհի, իսկ Սիսիանից՝ Պողոս Տեր Դավթյանի տեղացիներից
կազմված զորամասերը։ Անցնելով հարձակման, հայկական զորքերը կորուսում
են կարմիր զորամասերի դիմադրութեանը և մտնում Գորիս։ Սակայն մի քա-
նի Օր անց կարմիր զորամիավորումները Ադրբեջանից ստանալով նոր համա-
լըրում, թեժ մարտերից հետո նորից ներխուժում են նրկրամաս և գրավում
Գորիսը։ Օգոստոսի 10-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության և Խոր-
հրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջև կնքվեց զինադադարի համա-
ձայնագիր², որի համաձայն խորհրդային զորքերը ժամանակավորապես գրա-
վում էին Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի տարածքները՝ մինչև Հա-
յաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև դաշնագրի կըն-
քումը, որով պետք է որոշվեր այդ շրջանների վերջնական պատկանելիու-
թյան հարցը³։ Համաձայնագրի ստորագրումից հետո Դրոն Գորիսից տեղափոխ-
վում է Դարալագյազ, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության հր-
ահանգով անցնում է Երևան, իսկ Նժդեհը, չճանաչելով Թիֆլիսի համաձայ-
նագիրը, մնում է Ղափանում և շարունակում գլխավորել տարածքաշրջանի
ինքնապաշտպանութեան գործը։

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության գոյութեան ողջ ժամանակամի-
ջոցում հայկական բանակը հարկադրաբար ստիպված էր մշտապես ռազմական
գործողութեաններ վարել տարբեր ճակատներում։ Այդ շարունակական կռիվ-

1 Տե՛ս Համալսող Գևորգյան, Դրո, Երևան, 1991, էջ 148-149։

2 Հայկական կողմը ներկայացնում էին Ա. Բաբայանը և Ա. Զամալյանը,
իսկ խորհրդային Ռուսաստանը՝ Բ. Լեգրանը։

3 Տե՛ս Հ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 154։

ները, ճիշտ է, թեև ավելացնում էին հայկական բանակի մարտական փորձը,
սակայն, մյուս կողմից, հոգնեցնում էին զորամասերի անհնազանդման, նը-
պաստում էին նրան, որ բանակի զորամասերը մշտապես գտնվեն իրարից հե-
ռու՝ չմիահռչկվեն, չմարզվեն, չունենան հավաքական կամք և միակերպ գոր-
ծելու վարժաճութեանը։ Երկարատև ներքին կռիվներում զոհվում, վիրավոր-
վում ու շարժից դուրս էին գալիս բանակի լավագույն շատ սպաներ և զին-
վորներ։ Այս հանգամանքը ևս կարևոր նշանակություն ունեցավ 1920 թ.
թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայկական բանակի արագ նահանջի գոր-
ծում։

Հայկական բանակի գործունեության վերջին փուլը ռազմական գործո-
ղութուններն էին թուրքական զորքերի դեմ 1920 թ. աշնան թուրք-հայկա-
կան պատերազմում։ Օգտվելով Հայաստանի ռազմա-քաղաքական մեկուսացումից
և ավարտելով իր ռազմական նախապատրաստական աշխատանքները, 1920 թ. սեպ-
տեմբերի 23-ին քեմալական թուրքիան առանց պատերազմ հայտարարելու հար-
ձակվեց Հայաստանի Հանրապետության վրա՝ նպատակ ունենալով գրավել Արե-
վելյան Հայաստանը և վերջ դնել Հայաստանի Հանրապետության գոյութեանը։

Թուրք-հայկական պատերազմը փաստորեն ճակատագրական դարձավ հայ ժո-
ղովրդի համար՝ բերելով նրան նորանոր կորուստներ և ավերածութեաններ։
Շնորհիվ հարձակման հանկարծակիության և թուրքական զորքերի թվական մեծ
գերակշռության լճո հազարանոց թուրքական բանակի դեմ հայերն ունեին հա-
զիվ 30 հազարանոց բանակ¹, ինչպես նաև ներքին կռիվներում հոգնած և
թուլացած հայկական զորքերի վիճակից, թուրքական բանակը կարճ ժամանա-
կամիջոցում հասավ վճռական հաջողութեանների։ Սեպտեմբերի 29-ին թուր-
քական զորքերը գրավեցին Սարիղամիշը, 30-ին՝ Մերզենեկը։ Շուրջ ժամա-
նակ մենչեկիկյան Վրաստանի զորքերը, Օգտվելով թուրքական ճակատում հայ-
կական բանակի զբաղվածութեանից, հյուսիսում անցան Հայաստանի սահմա-
նը և գրավեցին Արդահանի շրջանի Զալդըր և Գյուլ կոչվող հայկական տեղա-
մասերը, իսկ Հայաստանի կառավարության բողոքի նոտային պատասխանեցին,
թե այդ շրջանները վիճելի են և բացի այդ, իրենց զորքերի ներկայու-
թյունը կկանխի թուրքական բանակի հարձակումը Արդահանի վրա։²

Թուրքերի կողմից Սարիղամիշի և Մերզենեկի գրավումով ավարտվում է
պատերազմի առաջին շրջանը լպատերազմը՝ ելնելով ռազմական գործողու-
թյունների բնույթից պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի,
որոնցից առաջինը տևում է մինչև սեպտեմբերի 30-ը, երկրորդը՝ հոկտեմ-

1 Տե՛ս Ս. Խ. Կարապետյան, 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սո-
վետական Ռուսաստանը, Երևան, 1965, էջ 31։

2 Տե՛ս Է. Ա. Զորբաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական
հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 1979, էջ 67։

բերի 1-ինց մինչև 26-ը և երրորդը՝ հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 16-ը / Թավոթ ամբողջ թուրք-հայկական պատերազմի ընթացքում հայկական բանակը չկարողացավ քիչ թե շատ լուրջ հաջողության հասնել և նահանջելով հետ-
րավորութուն տվեց թուրքական զորքերին գրավել, կարսը, Ալեքսանդրապո-
լը և ընդհուպ մոտենալ Երևանին։ Բացառութուն էր կազմում Սուրմալուի
ճակատը, որտեղ 1920 թ. հոկտեմբերի 26-ին անցնելով հակահարձակման, հայ-
կական զորամասերը ետ չպրտեցին թուրքերին, փրկելով Երևանը թուրքական
նվաճումից։ Ալեքսանդրապոլը թողնելուց հետո հայկական բանակը սկսեց կազ-
մալուծվել։ Եւրո առան դասալքութունները և քայքայվեց ռազմաճակատը։
Բանակի կազմալուծումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարութուն-
ը 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված համաձայնագրով իշ-
խանութունը հանձնում է բոլշևիկներին։ Հայ-խորհրդային համաձայնագրի
4-րդ կետով հայկական բանակի հրամանատարական կազմը չպետք է ենթարկվե-
ր պատասխանավորության այն գործերի համար, որ կատարել էր մինչև Հայաստա-
նում խորհրդային իշխանության հաստատումը։ Եւրդ կետով Հայաստանի Հան-
րապետության կառավարութունը հեռանում էր իշխանութունից։ Այն ժամ-
անակվորապես, մինչև հեղափոխական կոմիտեի Երևան ժամանումը, անցնում
էր զորահրամանատարութանը, որի գլուխ էր կանգնում Դրոն, իսկ ՌԽՖՍՀ-
ի կողմից՝ Հայաստանի զորահրամանատարութանը կից կոմիտեի նշանակված
Բ. Սիլինին¹։

Երևանյան համաձայնագրի ստորագրման օրը /դեկտեմբերի 2-ին/ խոր-
հրդային Հայաստանի զինված ուժերի հրամանատար Դրոյի կողմից հրապարակ-
վում է Հայաստանի Հանրապետության բանակին ուղղված թիվ մեկ հրամանը,
որի համաձայն Հանրապետության բանակը վերակազմավորվում էր Հայաստանի
խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կարմիր բանակի։

Հրամանագրի 1-ին կետով հայկական բանակը այսուհետև կոչվելու էր
խորհրդային Հայաստանի կարմիր բանակ։ Եւրդ կետով վերացվում էին անհ-
նակազմի ստորաբաժանումը սպաների, ենթասպաների և շարքայիների /զինվո-
րական կոչումները վերացվում էին/։ Արգելվում էր կրել նախկին բոլոր
տեսակի շքանշանները և տարբերանշանները, բացի կարմիր դրոշի շքանշանից։
Այսուհետև բանակի յուրաքանչյուր ծառայող անվանվելու էր իր զբաղեցրած
պաշտոնի անունով։ 3-րդ կետով պաշտոններում հրամանատարական կազմի նը-
շանակման ժամանակ ոչ մի ընտրականութուն չէր թույլատրվելու։ 4-րդ կե-
տով բոլոր կարմիրբանակայիները՝ մարտիկից մինչև հրամանատար, պարտա-

1 Տես Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զար-
գացումը, Աթենք, 1968, էջ 315-317 նաև՝ Ս. Վրացյան, Հայաստա-
նի Հանրապետութուն, Թեհրան, 1982, էջ 501-502։

վոր էին բանակում պահպանել խիստ հեղափոխական կարգապահութուն, պահան-
ջելով յուրաքանչյուրից գիտակցաբար և անհնազանդ կերպով կատարել իրենց
պարտականութունները։ Եւրդ կետով բոլոր զորամասերում նշանակվում էին
քաղաքական կոմիսարներ, որոնց պարտականութունն էր զորամասի քաղաքա-
կան ղեկավարության իրականացումը։ Այսուհետև զորամասերի պետերի բո-
լոր հրամանները պետք է հաստատվեին քաղաքական կոմիսարի կնիքով, առանց
որի այդ հրամանները ենթակա չէին կատարման։ Մինչև զորամասերում նշա-
նակված քաղաքական կոմիսարների տեղ ժամանելը, բոլոր հրամանները պետք
է տրվեին միայն պետերի ստորագրությամբ։ Եւրդ կետով բոլոր զորամասերը
մնում են իրենց տեղերում։ Առանց համապատասխան կարգադրության չէր թույ-
լատրվում ինքնազուկ տեղաշարժվել կամ թողնել զբաղեցրած վայրը։ 7-րդ
կետով հրամանատարական կազմից և կարմիրբանակայիներից ոչ ոք իրավունք
չուներ թողնել իր զորամասը։ Եւրդ կետով ժողովրդական գույքի փչացման,
ներառյալ կոմիտեի կամ հափշտակության դեպքում մեղավորը պատժվում էր ռազ-
մահեղափոխական Օրենքների ողջ խստությամբ։ 9-րդ կետով նախատեսվում էր
զինքի ինքնազուկ կերպով թողնելը, նրա վաճառքը կամ գիտակցաբար փչա-
ցումը պատժել խստագույն կարգով¹։

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումից հետո, փաստորեն Հայաստա-
նի Հանրապետության բանակը ոչ թե կազմացրվեց, այլ վերակազմավորվեց
ՀԽՍՀ-ի կարմիր բանակի։ Կազմացրման ենթարկվեց միայն հայկական բանակի
աբևտահայերից կազմավորված 4-րդ բրիգադը, որի հրամանատարը Սեպուհն
էր։

Ամփոփելով Հայաստանի Հանրապետության բանակի զորեականության վե-
րաբերյալ մեր հետազոտությունը, նշենք, որ Հայաստանի առաջին հանրապե-
տությունը գոյություն ունեցավ շատ բարդ ռազմա-քաղաքական պայմաննե-
րում։ Այդ իսկ պատճառով էլ իր գոյության երկու սուկես տարվա ժամանա-
կաշրջանում հայկական բանակի զորամասերը ստիպված էին անդադար ռազմա-
կան գործողություններ վարել ինչպես արտաքին ճակատներում, այնպես էլ
ներքին թշնամիների դեմ, որոնք նպատակ ունեին ներսից պայթեցնել նորա-
կազմ հայկական պետությունը։ Շնորհիվ հայկական բանակի անհնազադի տո-
կունությունը, նրան մինչև 1920 թ. հայ-թուրքական պատերազմը հաջողվեց
իրականացնել երկրի պաշտպանության այդ ծանր գործը։ Այնպես, 1918-
1920 թթ. ժամանակամիջոցում հայկական զինված ուժերին հաջողվում է ոչ
միայն ետ մղել թշնամիների ոտնձգությունները, այլև մի շարք մարտերում

1 Տես, Դիմիդիդիայի կազմավորումը, Բանբեր Հայաստանի արխիվների,
Երևան, 1976, հ. 3, էջ 15-16։

պարտութեան մատնել նրանց: Հայաստանի առաջին հանրապետութեան կործանումից հետո հայկական զինված ուժերը չկազմացրվեցին, այլ վերակազմավորվեցին որպէս Հայաստանի խորհրդային հանրապետութեան կարմիր բանակի:

Ստեփանուհի Սարգսի վերջապահում ընդհանրացված են ուսումնասիրութեան արդյունքները, որոնք հիմնականում հանգեցնում են հետևյալ եզրահանգումներին:

1. 1918 թ. մայիսին հայկական պետականութեան վերականգնման հետ միաժամանակ կազմակերպվեցին նաև նրա զինված ուժերը, որոնք կոչված էին իրականացնելու հայկական պետութեան պաշտպանութունը ներքին և արտաքին չափազանց ծանր պայմաններում:

2. Հայաստանի Հանրապետութեան զինված ուժերի հիմքը կազմեցին ուսանական զորքերում ծառայած կովկասյան և Արևմտյան ճակատների հայ սպաները և զինվորները, որոնք 1917 թ. վերջին համախմբվել էին Հայկական բանակային կորպուսի մեջ, 1918 թ. հունիս-Օգոստոս ամիսներին հայկական կորպուսի վերակազմավորման միջոցով ստեղծվեց Հայկական առանձին զինվորական, իսկ առաջին համաշխարհային պատերազմում թուրքիայի պարտվելուց հետո երեք առանձին բրիգադներից բաղկացած մի զորաբանակ, որի թվաքանակը, ելնելով երկրի պաշտպանութեան ամրապնդման անհրաժեշտութենից, 1919-1920 թթ. ժամանակամիջոցում մշտապես ավելացվում էր:

3. Հայաստանի Հանրապետութեան շուրջ 40 հազարանոց բանակը սպառազինված էր տվյալ ժամանակի չափանիշներով ժամանակակից զինատեսակներով: Բանակի համալրումը սպառազինութեամբ կատարվում էր հիմնականում զրսից ստացվող զենքի և զինամթերքի հաշվին: Շուրջակազմ հանրապետություններ տնտեսապես դեռ այնքան չէր ամրապնդվել, որ կարողանար անհրաժեշտ չափով բավարարել իր բանակի կարիքները:

4. Հանրապետութեան բանակը կազմակերպական տեսակետից հետևում էր ուսանական համակարգին և կառավարվում էր ուսանական զինվորական կանոններով և Օրենքներով: Հստ էություն, առաջին հանրապետութեան բանակը կանոնավոր բանակ էր, որը համալրվում էր Հայաստանի խորհրդարանի և կառավարութեան համապատասխան Օրենքներով և որոշումներով: Բանակի սպայական խմբի հրամանատարական կազմը բաղկացած էր ուսանական զինվորական զինամարտական և ուսումնարաններ ավարտած, հարուստ մարտական փորձ ունեցող սպաներից, որոնց միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարութեանը հաջողվեց ոչ միայն կազմակերպել հայկական զինված ուժերը, այլև, չնայած անբարենպաստ պայմաններին, պահպանել նրա անձնակազմի մարտական պատրաստակունության մակարդակը գոնե բավարար մակարդակի վրա:

5. Ընայած Հայաստանի ներքին դժվարին կացությանը և երկրում շուտափույթ լուծումներ պահանջող բազմաթիվ խնդիրների առկայությանը, լազարականություն, սով, համաճարակներ և այլն, զինված ուժերի շինարարության հարցերը մշտապես եղել են Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ընդունվել են մի շարք Օրենքներ և որոշումներ, որոնք հնարավորություն են տվել ստեղծելու քիչ թե շատ մարտունակ բանակ: Դժբախտաբար երկրի բարդ կացությանը և արտաքին քաղաքական անկայուն վիճակը հնարավորություն չտվեցին ավարտելու սկսված գործը: Հարկ է նաև խոստովանել, որ հաճախ կառավարության ընդունած լավ որոշումները չէին կատարվում և մեծ տուժ էին թշվառ: Այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ պատմական կոնկրետ պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ամեն ինչ արեց իր զինված ուժերի ստեղծման ու կենսագործունեության համար: Շուրջ չորս չորս կառավարության մշտական հոգատարությանը և բանակի հրամանատարական կազմի ջանքերին, հանրապետության զինված ուժերը 1920 թ. հայ-թուրքական պատերազմը կարողացան պատվով կատարել իրենց վրա դրված պետության և ժողովրդի պաշտպանության գործը: Ներքին և արտաքին թշնամի պետության կոնկրետ պաշտպանության գործը ոչ միայն կանգնեցնել էր իր զինվորներին, այլև շատ մարտերում պարտության մատնել նրան: Հայկական բանակի շնորհիվ կառավարությանը հաջողվեց նաև ոչ միայն զբաղվել արհեստական մի շարք խռովություններ, որոնք նպատակ ունեին վիժեցնելու հայկական պետության կայացումը, այլև զրավեցին և Հայաստանի Հանրապետությանը միացվեցին թուրքիայի կողմից նախկինում բռնազավթված մի շարք հայկական տարածքներ, ինչը թույլ տվեց Հայաստանի կառավարությանը Հայաստանի Հանրապետության ստեղծման տարեգրքի Օրը 1919 թ. մայիսի 28-ին հռչակել Միացյալ և Անկախ Հայաստանի պատմական ակտը:

6. Ներքին կոնֆլիկտներից թուլացած հայկական բանակը դժբախտաբար պարտություն կրեց 1920 թ. հայ-թուրքական պատերազմում, ինչի մեջ փոքր չէր նաև խորհրդային Ռուսաստանի և փեմալական թուրքիայի համագործակցության դերը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, Հայաստանի Հանրապետության բանակը չկազմացրվեց, այլ վերակազմավորվեց որպես խորհրդային Հայաստանի կարմիր բանակի, սակայն կարճ ժամանակ անց անհիմն ռեպրեսիաների ենթարկվեցին հայկական բանակի հարյուրավոր սպաներ՝ արգելվելով Ռուսաստանի տարբեր բանտային ճամբարներ:

Ստեփանուհի Սարգսի բովանդակությունը հրապարակվել է հեղինակի հետևյալ աշխատություններում:

1. Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի պատմությունը, Ռաիսբեր Շրևանի համալսարանի, , 1993, հ. 2, էջ 3-11:

2. Հայկական ազգային բանակային կորպուսի ստեղծման պատմությունը, Ռաիսբեր Շրևանի համալսարանի, , 1994, հ. 1, էջ 3-12:

3. Որպեսզան շինարարությունը Հայաստանի առաջին հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտների և երիտասարդ գիտաշխատողների 1993 թ. նոյեմբերի 2-ի գիտաժողովում կարդացված զեկուցման թեզները:

М. Л. Карапетян
Армия Республики Армения и ее деятельность в
1918-1920г.г.

Резюме

Важное значение при изучении истории первой Армянской Республики, восстановленной спустя 600 лет после потери национальной государственной независимости, приобретает объективное освещение вопросов формирования и деятельности армянской национальной армии.

Однако, в годы Советской власти, исходя из политических соображений, научное исследование истории армии первой Армянской Республики игнорировалось и не проводилось или, по понятным причинам, представлялось в искаженном виде. Следовательно, в настоящее время, когда строится армянская национальная государственность, перед армянской историографией жизненной и актуальной необходимостью стало представление целостной и правдивой истории как первой Армянской Республики, так и ее составной части - истории формирования и деятельности Армянской армии.

Основной целью настоящего исследования является представление исторически сложного процесса становления Вооруженных сил Республики Армения и их роль в государственно-политической жизни страны, в деле стабилизации ее внутреннего порядка и защиты Республики от внешних врагов.

В диссертации, состоящей из введения, трех глав /Глава I «Формирование Вооруженных Сил Республики Армения, их структура и численность», Глава II «Вооружение и комплектование армянской ар-

мии. Офицерский состав армии», Глава III «Деятельность армянской армии в 1918-1920 г.г./, заключения, документальных приложения, библиографии использованных первоисточников и опубликованной литературы, предпринята попытка обстоятельно представить процесс Формирования армии Республики Армения, роль государственно - политических деятелей в этом деле, подробно показать также структуру и численность армии в 1918-1920г.г., ее вооружение, источники и порядок комплектования, офицерский /командный/ состав и участие в боевых действиях до ноября 1920 г.

Автором освещены также вопросы переформирования армянской армии в Красную армию Арм. ССР, осуществленной на основании договора заключенного 2 декабря 1920г. в Ереване между правительством Республики Армения и полномочным представителем Советской России Б. Лиграном, а также вопросы, связанные с проводимыми в дальнейшем гонениями и ссылками офицеров - армян, осуждая и считая эти действия необоснованными по отношению к лицам самоотверженно служившим своей Родине.

Данное исследование имеет не только научное, но и важное практическое значение. Всестороннее исследование формирования и деятельности Армии первой Армянской Республики, выявление ее положительных сторон и недостатков даст возможность в настоящее время избежать ошибок и промахов в сфере военного строительства.

Приведенные в исследовании многочисленные выявленные и введенные в научный оборот материалы, без сомнения, могут быть использованы специализированными кафедрами ВУЗ-ов и в специальных курсах военных училищ, а также в деле военно-патриотического воспитания молодежи Республики.

З. Овсепян